ԳԻՐԻ Ա.—ԳԼ. Ի. —Առաճող Երեւան ու լուսեւան սիրոյն վրայ:

(Շար.)

Ի՞նչ կրնա ծնունդ տալ մը, որ կարենայ երգար ժամանակ տալ՝ արեւուն ծակ:

Կը կարծես արդեօք որ պիտի կշռանա. սակայն ասոր երբեք հասնելիք չունի:

Երբ ամեն քան առջեւ ծնունդու ըրայիտ, ի՞նչ պիտի ըրար երբ ոչ սնոյի երեւոյթ մը:

Վերցնա՛ւ արեւուն տա Աստուած ի քարտուս, եւ արօթ՝ մեղմեղ ու զանգառուքիւններուդ հաւմար:

Ունայնութիւնները քո՛ղ ընդունայններու. իսկ դու միօ դի՛ր այն քաններուն զորոնք ինչի հրամայեց Աստուած:

Փակե՛ր ինչ վրայ սնունդիդ դուռը, ու կանչի ինչի զօրութեւ, ինչ սիրելիդ:

Մնացի՛ր սնունդ հետ ինչի ինչ. որովհետեւ ուրիշ տեղ այնչափ խաղաղութիւն չպիտի գտնուի:

Երբ դուք ելած ու աշխարհիս աղմուկներէն քան մը լսած լըրայիտ, լաւ եւս մնացած կ'ըրայիտ անվրդով խաղաղութեան մէջ:

Բանի որ երբեմն լուրացուեալ լսելին կ'ախորժիս, հարկաւ ակն պիտի կրես սրտի վրդովմունք:

ՍՐՔՈՒՂԻ ԹԵՐԵԶԻԱ

(Գիտութիւն կոնգրէս)

Ս. Հաղորդութեան ունեցած ջերմեւանդութիւնը

Ձեռք ուղեր ծանրանալ այն փութկոտ անձնութեւններուն վրայ, որով Թերեզիա կատարեց իր նոր պարտաւորութիւնը Գրիստոսի հարաւ. որովհետեւ արեւոյ ծնունդն է ըստ բաւականի որ անկախ մինչեւ այն ատեն վարժուած ըլլալով բնաւ չփնտաւելու իր սեփական հաճոյքը այլ Յիսուսի շահերը, շարունակեց այնուհետեւ ալ անոր բոլորովին հաւատարիմ ըլլալ եւ ապրիլ անոր համար եւ ոչ թէ իրեն համար:

Բայց այս կոյսին վրայ աւելի աչքի գարնող բանք այն արտաքին կարգի բուռն սերն էր, զոր իր աստուածային Փեսան աւելի շքեղօրէն փառաւորելու եւանդէն մղուած՝ կը տածէր երկրիս սա երկու ամենէն վեհաշուք բաներուն՝ Հաղորդութեան եւ Եկեղեցւոյ, աստուածային սիրոյն այս հրաշալիքներուն, որ յափշտակելու են ամեն ճշմարիտ քրիստոնեաներուն սիրտերը, որ խաչին վրայ հոգեվար Յիսուսի Արարչին ելած են:

Ո՞վ Թերեզիային աւելի լաւ կերպով եւ աւելի վսեմ բացատրութիւններով դրուատած է այն իմաստութիւնը եւ բարութիւնը զոր Աստուած ցոյց կուտայ Հաղորդութեան մէջ. ըստ որում այս սուրբ Խորհուրդին մէջ միջոցը կը գտնուի թէ՛ անհատական կերպով փոքրկանայն, մինչեւ մեր աստիճանին իջնելուն, եւ թէ՛ գոհացում տալու իր սիրոյն պահանջներուն, յաւեցեացներով յեկտեղ այն զոհք որով մարդկային ազգը փրկեց: Ո՞վ իրմէ աւելի բուռն քաղց եւ ծարաւ զգաց Յիսուսի Քրիստոսի Մարմինն եւ Արեւին: Իր օրով, բարի քրիստոնեաներին իսկ սուրբ Աղանին ստեպ մտնեալու չէին համարձակել, բայց Թերեզիա ամէն օր կը հաղորդուէր եւ այնքան տենչաւոր արտով որ ուրիշ մարդկային ուժ չէր կրնար զինքն ետ կեցնել խորհուրդին Հացը ճաշակելէ, եթէ նոյն իսկ հարկադրուէր այս բանիս համար սուրբերով ծածկուած դաշտ մը կտրել անցնել: Ով իրմէ աւելի վշտալի ողբեր լսեցուց նկատմամբ այն յանցապարտ ցրտութեան եւ արհամարհող ամբարշտութեան, որոնցմով այնքան քրիստոնեաներ կը վարուէին մեր Տիրոջ հետ սիրոյ Խորհուրդին մէջ: Ո՞վ երբեք իրմէ աւելի եւանդով աշխատեցաւ հատուցում ընելու այս անձաւ. սիրոյ Խորհուրդին մէջ Փրկչին եղած թշնամանքներուն: Ինչ չի դադրել իր դասարանը այս յարատեւ հատուցումը ընելու հրաւիրելէ յանձնարարելով անոնց որ այս բանիս փայլծ տանին ամէն տեսակ անձնանութեան: Այնքան խորապէս ու սաստկօրէն կը զգար այն արտակէց ցաւը զոր իրեն կ'աղբէր արարածներու սեւ ապրտախտութիւնը նկատմամբ Աստուծոյ. ինչ կարծես այլեւ չէր կրնար հանգուրժել աստուածային Բարութեան այսպէս մոռցուելուն, եւ թախանձաբէր կը խնդրէր Աստուծոյ կամ փութով ջնջել մարդոց այս չարութիւնը, կամ անոր վերջ տալու համար երկիրն ամբողջ անդադաւոր կորստեան մատնել:

Եկեղեցւոյ հանդէպ ունեցած սերը

Բայց ի՞նչպէս կը սիրէ ինչ Եկեղեցին, բոլոր քրիստոնէից մայրը, ինչ չէր հաստատել միթէ որ անկարելի է վատուած չղոր սրտանց սիրել եւ միեւնոյն ժամանակ Յիսուսի փառքը չփնտաւել եւ եւանդաբան չծառայել Եկեղեցւոյ, անոր հարսին շահերուն: Ամէն պարագայի մէջ Եկեղեցւոյ հանդէպ ցոյց կուտայ ամենէն որդիական եւ ամենէն բացարձակ հպարտականութեան զգացումներ: Տեսէ՛ք ի՞նչպէս կը բարձրացնէ իր գրուածքներուն մէջ այն իշխանութիւնը զոր Եկեղեցին տաւ է Քրիստոսին, իր հիմնադրէն: Այսպէս, օրինակի համար — եւ այս իսկ կրնայ չափազանց երեւել, անոնց որ իրերը հարեւանցի կը կշառադատեն — նկատեցէ՛ք արտաքին կարգի, բայց միգի համար հիմնալի, համարումը, զոր Ս. Հոգւոյն պարգեւներով այնքան ճոխացած եւ Աստուծոյ ընտանութիւնը սովորաբար վայելելու չափ անոր մտերիմ եղած այս կոյսը ունէր նկատմամբ Խորհրդականք կոչուած այն սուրբ

իրերուն որոնք Եկեղեցին հաստատած է ինչ ինչ հոգեւոր արգելանքներու համար. ինք կ'ըսէր թէ ես պատրաստ եմ մեռնելու, և հազար անգամ մեռնելու, ասոնց համար և Ս. Եկեղեցւոյ նոյնիսկ ամենափոքր արարողութեան համար թերեզիւ, որուն աշխոյժ և վառվռուն իմացականութիւնը առաւելապէս պայծառացած էր աստուածային իմացականութեան լոյսերով, կը հասկնար թէ Եկեղեցւոյ ուրախութիւնները, ինչպէս նաեւ կորանքները, մեծ մասամբ կախում ունենին մարդկութեան մէջէն անոր ընթացքը ուղղելու պաշտօնը ունեցող ժողովուրդներու արժանիքէն, և թէ իր սուրբ կոչման՝ օրինակելի կերպով հետեւող քահանայ մը միայն կրնայ աւելի դրժել հոգւոց փրկութեան համար քան բազմաթիւ գաղթ քահանայներ միանգամայն Ասոր համար այն հեծութիւններուն և արցունքներուն, զորոնք իրմէ կը խլէին թէ ամբարշտութեան հեղեղներէն խրամատուած Եկեղեցւոյ երեւոյթը և թէ յաւիտենական անդունդը գահաձիւծող այնքան թշուառներու պարզած տեսարանը, կը միացնէր աւելի մեծ ճգնութիւններ, աւելի բազմաթիւ մարմնական ճնշումներ և յաճախութիւն խոնարհ ազօթքներու որպէս զի Աստուած հաճի շնորհել իր Եկեղեցւոյն փորձ և զիտուն և իրենց վիճակին պահանջած առաքինութիւններով զարդարուած քահանայներ՝ որպէս զի կանեան հաւատացեալներու հոգւոյն փրկութեան աշխատիլ առանց զնասելու իրենց անձին հոգեւոր բարեքին:

(Շարունակելի)

Հետեւեալ տեղեկագիրը կ'ընդունինք Ձմաւառ վանքէն.

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՁՄՄԱՌԵԱՆ ՄԻԱՔԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

1914 Մայիս 10/ին կիրակի օրը առաւօտեան ժամը ութին կաթողիկոսական նուիրակ և ընդհանուր ժողովոյս Նախագահ, Բերիոյ վիճակաւոր, Արհի. Օգոստինոս Արքեպիսկոպոս Սայեղեանի կողմանէ Հոգւոյն Սրբոյ շնորհքը հայցելու համար պատարագ մատուցուեցաւ, որուն ներկայ գտնուեցաւ վանքը եղող բոլոր հասարակութիւնը:

ԱՌՍՁԻՆ ՆԻՍՏ

Նոյն օրը առաւօտեան ժամը 9ին Արհ. Նախագահը ու 13 քուարկուները պումարուեցան կատարեալ լուծեամբ ժողովարան սահմանուած վանքին նորակառոյց չքեղ ըն-

դունելութեան սենեակը: Քուէարկուներէն հինգը արգէն վանքն էին, և եւս. — 1. Արհի. Յուսիկ Արքեպիսկոպոս Կիւլեան, 2. Գեր. Գրիգոր Մ. Վ. Աշգեան, 3. Գեր. Սուքիաս Մ. Վ. Զրեան, 4. Գրիգոր Վ. Ահմարանեան, 5. Պետրոս Վ. Յարութիւնեան, Իսկ Ամենապ. Հոգեւոր Տիրոջմէ որոշուած ութը քուէարկուները եւս. — 1. Գերապայծառ Անդրէաս Թ. Մ. Վ. Աղեքսանդրեան, 2. Գերյարգելի Ռաֆայէլ Թ. Մ. Վ. Պայեան, 3. Գերյարգելի Յովակիմ Թ. Մ. Վ. Թովմայեան, 4. Գերյ. Իգնատիոս Մ. Վ. Թէրզեան, 5. Գերյ. Մինաս Մ. Վ. Տէր Մինասեան, 6. Գեր. Գրիգոր Վ. Վանաչարեան, 7. Գեր. Անտոն Վ. Թէրզիպաշեան, 8. Գեր. Յակոբ Վ. Նէսիմեան:

Յոտնկայս «Եկ սուրբ հոգի» աղօթքէն վերջ իւրաքանչիւրը ըստ կարգի իր յատուկ աթոռը բաղմեցաւ: Գեր. Տէր Մինասեան բարձր ձայնիւ կարդաց Հայրապետական կոնդակը, որով Ամենապ. Հոգեւոր Տէրը կը կարգէր կաթողիկոսական փոխանորդ եւ գահերէց Ընդհանուր Ժողովոյս՝ Արհի. Օգոստինոս Արքեպիսկոպոս Սայեղեանը, որ հակիրճ բանախօսութեամբ մը բացաւ պաշտօնապէս Ընդհանուր Ժողովոյս անմիջապէս ձեռնարկուեցաւ ժողովոյն Ատենադպիրի ընտրութեան: Առաջին քուէարկութեամբ ոչ ոք բացարձակ մեծամասնութիւն չահելով, հարկ տեսնուեցաւ կրկնութեան, ուր բացարձակ մեծամասնութեամբ քուէից ընտրուեցաւ Ատենադպիր Ընդհանուր Ժողովոյ Տէր Մինասեան Մինաս Մ. Վ. զոր հաստատեց խաչի նշանաւ Արհի. Նախագահը:

Ապա սկսաւ երկու խուզարկուներու ընտրութիւնը. առաջին քուէարկութեամբ ընտրուեցաւ միայն Գեր. Թէրզիպաշեան Անտոն Վ. քուէից բացարձակ մեծամասնութեամբ: Երկրորդ քուէարկութիւնը արգիւնք մը յառաջ չբերաւ: Երրորդ քուէարկութեամբ ընտրուեցաւ երկրորդ խուզարկու Գեր. Գրիգոր Վ. Ահմարանեան համեմատական մեծամասնութեամբ, զորս նմանապէս հաստատեց Արհի. Նախագահը:

Այս երեք պաշտօնիայք իրենց պաշտօնաչ

տեղին, ամենայն ինչ կազմ և պատրաստ՝
ձեռնարկուեցաւ ընտրութեան վանական
Մեծաւորի, որ ի մեծ ուրախութիւն ամե-
նուն մի միակ քուէարկութեամբ լմնցաւ. բա-
ցարձակ մեծամասնութեամբ քուէից ընտր-
ուեցաւ վանական մեծաւոր Գեր. Վախա-
չարեան Գրիգոր Վ. որ թէպէտ մերժեց.
հրաժարեցաւ, թախանձեց Արհի. Նախագա-
հին, ու բոլոր քուէարկուներուն որ չպնն-
իր ուսերուն վրայ այս պաշտօնը, սակայն
ի վերջոյ գրեթէ ակամայ զիջաւ ամենուն
քաջալերական ու յորդորական խօսքերուն.
ուստի հեռագրուեցաւ Արհի. Նախագահին
կողմէ Ամենապ. Հոգեւոր Տիրոջ որ հաստա-
տէ Մեծաւորին ընտրութիւնը և այսպէս
փակուեցաւ առաջին նիստը:

Մայիս 11 երկուշաբթի արշալոյսին հա-
սած էր արդէն Ամեն. Հոգեւոր Տիրոջ վա-
նական մեծաւորին հաստատութեան աւետա-
բեր հեռագիրը, և առաւօտեան ժամը ութին
Արհի. Նախագահը հաւաքելով քուէարկու-
ները ժողովարանին մէջ, պաշտօնապէս հա-
ղորդեց զայն անոնց. և անմիջապէս եկեղե-
ցական թափօր կազմուեցաւ ժողովարանը:
Արհի. Նախագահը Հայրապետական զգեստով,
աջ կողմն ունէր Նորընտիր վանական Մե-
ծաւորը որ հպած էր փորձարար ու շուր-
ջառ, ձեռքը՝ խաչ ու գլուխը՝ սաղաւարտ.
միւս քուէարկուները շուրջառով ու Նորըն-
ծայ դպրոցականք եկեղեցական շապիկով
զոյգ զոյգ կեցած էին: Կը բարձրանար ասոնց
առջին ձողաբարձ խաչը երկու կողմը ունե-
նալով մոմակիրներ ու բուրվառակիր քահա-
նայ մը: Սոյն միջոցին վանքին կրկին զան-
գակները սկսան հնչել իրենց ուրախութեան
ձայները և լսելի ընել հեռու հեռու Լիբա-
նանու դալարագեղ կողերուն վրայ ցան և
ցիր սփռուած վանօրէից, եկեղեցեաց ու բը-
նակչաց, եկեղեցական վեհութեամբ թափօրը
սկսաւ յառաջանալ սրահէն դէպի եկեղեցին
«Նորաստեղծեալ»ը պեղպեղելով: Տիրամօր
վերափոխման նուիրուած Աւագ խորանը չը-
քեղօրէն զարդարուած էր. բազմաթիւ մո-
մերու լուսաւորութիւնը վսեմ տալաւորու-
թիւն մը կը ձգէր ներկաներու աւելի սրտե-

րուն քան թէ աչքերուն վրայ: Հոն ջերմ
եռանդով բոլոր հասարակութիւնը երգեց
«Մայր Սուրբ»ը խնդրելով Տիրամօր կու-
սին հզօր հովանաւորութիւնը վանքին, Նոր-
ընտիր Մեծաւորին, ընտրելի Պաշտօնատեարց
ու բոլոր միաբանից վրայ: Ապա թափօրը
նոյն կարգաւ ու շարականով վերադարձաւ
ժողովարանը, ուր Արհի. Նախագահը նախ,
և ապա միւս քուէարկուք շնորհաւորեցին
Նորընտիր Մեծաւորը յարգանքներով և ա-
ջահամբոյրներով:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Թիշեալ հանդիսութենէ քիչ մը վերջը,
այս է ժամը 9ին, Արհի. Նախագահը ու-
տասուիրեք քուէարկուք գումարուեցան ժո-
ղովարանը կատարեալ լուծեամբ բազմե-
լով յատուկ աթոռնին: Յոտնկայս «Եկ Սուրբ
Հոգի» աղօթքէն յետոյ վերաբազմեցան: Ա-
տենադպիրը ու երկու խուզարկուք իրենց
յատուկ վայրը բռնած՝ մնացեալ պաշտօնա-
տեարց ընտրութեան ձեռնարկուեցաւ: Հազ-
ուադէպ յաջողութեամբ պսակուեցաւ քուէ-
արկութիւնք, Ընդհանուր ժողովը յարմար
դատեց Փոխ Մեծաւորի ու Ատենադպիր կըր-
կին պաշտօնները միացնել մէկ անձի վրայ
Սահմանադրութեան տաաներորդ կանոնին
համաձայն: Ուստի առաջին քուէարկութեամբ
քուէից բացարձակ մեծամասնութիւնով ըն-
տրուեցաւ Փոխան Մեծաւոր և Ատենադպիր
Գեր. Մեսրոպ Վ. Բէշիշեան: Երկրորդ քուէ-
արկութեամբ քուէներու բացարձակ մեծա-
մասնութիւնով ընտրուեցաւ Ընդհանուր Մա-
տակարար Գեր. Մինաս Մ. Վ. Տէր Մինաս-
եան: Երրորդ քուէարկութիւնը՝ որ էլ մաս-
նաւոր մատակարարի մը, արդիւնք մը յա-
ռաջ չբերաւ, բացարձակ մեծամասնութիւն
ոչ ոք չհասն ըլլալուն պատճառաւ: Զոր-
րորդ քուէարկութեամբ քուէներու բացար-
ցակ մեծամասնութիւնով ընտրուեցաւ մաս-
նաւոր Մատակարար Գեր. Գրիգոր Վ. Ահ-
մարանեան: Հինգերորդ քուէարկութեամբ
քուէներու բացարձակ մեծամասնութիւնով
ընտրուեցաւ Վերակացու Միաբանական կղե-
բիկոսաց Գեր. Ստեփան Վ. Լաչինեան: Վե-

ցերորդ քուէարկութեամբ քուէներու բա-
ցարձակ մեծամասնութիւնով ընտրուեցաւ
Վերակացու թեմական կղերիկոսաց՝ Գեր. Սի-
մոն Վ. Պայեան: Եօթներորդ քուէարկու-
թեամբ քուէներու բացարձակ մեծամասնու-
թիւնով ընտրուեցաւ Մատրանապետ՝ Գեր.
Պետրոս Վ. Յարութիւնեան: Ութերորդ
քուէարկութեամբ քուէներու բացարձակ մե-
ծամասնութիւնով ընտրուեցաւ Հոգեւոր Հայր՝
Գեր. Անտոն Վ. Թէրզիպաշեան:

Այս եօթը պաշտօնատէրները ըստ այսմ
օրինաւորապէս ընտրուելէ ետք, Արհի. Նա-
խագահը Ամեն. Հոգեւոր Տիրոջ կողմանէ ի-
րեն տրուած իշխանութեան զօրութեամբ
հաստատեց զանոնք և կարճաոտ բանախօ-
սութեամբ շնորհաւորելով պաշտօնին՝ փա-
կեց երկրորդ նիստը:

Գահերեց Ընդհանուր Ժողովոյ Օգոստինոս
Վ. Սայեղեան Արք. Բերիոյ, Յուսիկ Արք-
եպս. Կիւլեան, Ա. Վ. Աղեքսանդրեան,
Գրիգոր Վ. Վայցաշարեան, Ռափ. Թ.
Ծ. Վ. Պայեան, Յովակիմ Թ. Ծ. Վ. Թով-
մայեան, Գրիգոր Ծ. Վ. Աւրբեան, Սու-
քիաս Ծ. Վ. Զրեան, Իգնատիոս Ծ. Վ.
Թերզեան, Մ. Ծ. Վ. Տեր-Մինասեան,
Ա. Վ. Թերզիպաշեան, Յակոբ Վ. Նե-
սիմեան, Գրիգոր Վ. Անմարանեան, Պետ-
րոս Վ. Յարութիւնեան:

ԳԱԹՕԼԻԲ ՄԷԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ(*)

(Տեւլամի)

ա. Հէր ինսան գալսիւնին տէրինինէ կի-
րէճէք օլուրսա, օրատա մէսուտ վէ պախ-
թիյար օլտաղա պիր արզուլը շէտիտ պուլուր:
Պու արզուլը, ինսան պիզլաթ քէնտիսինէ
վէրմիլ օլմատըղընտան վէ ծնը իմհա իթմէք
տէ եէտի իզթիտարընտա պուլուլմատըղըն-
տան, օ կիպի պիր արզուլ քէնտիսին մահ-
սուլը խայալը տէնիլէմէղ: Պու արզուլ շախ-
սի պիր շէյ տէ տէնիլէմէղ, չիւնքի ինսան-
լարըն քեաֆֆէսի տէ հէր եէրտէ, վէ հէր

զէմանտա ծնը հիսս իթմիլ վէ էլան տա հիսս
իթմէքտէ աիլէր: Պինաէն ալէյհ, պու ար-
զուլ ինսանըն թա գաարը գալպինտէն նէ-
պան իտէն վէ քէնտի թապիաթըլա պիր օ-
լան պիր արզուլը իւլլի տիր:

Իմտի, հիլ տէնիլէպիլիլ մի քի ձէնապը
Հազդ պիզէ գաթիէն իճրա իթմէյէճէյի պու
կիպի պիր շէտիտ արզուլ վէրմիլ տիր: Պիպի
սաատէթ իլուլն եարատըլ տա ծնա նայիլ օլ-
մաղը իմքեանարը պրազմազ օլապիլիլ մի:
Հիլ շիւպհէ իսթէմէղ քի պուլնլար գապիլ օ-
լաճազ ֆարգիյաթտան տէյիլ տիրէր. եօզ-
սա Ալլահ հագիզաթ Ալլահ օլմամամաը լա-
զըմ կէլիլ: Էն ուֆազ պիր պէօճէյին պիլէ
սէվպի թապիիսինէ ճէվէլան վէրէն պիր Ալ-
լահ հիլ նա'սըլ օլապիլիլ տէ պիզիմ բուհը-
մըզա նագշ էլէմիլ օլտուղը պիր արզուլը
պաշա չըգարմասըն, ծնա նէյլան պախշ էլէ-
մէսին: Էօյլէ իսէ էր եա կէճ ինսան սաա-
սէթի քամմէյի նայիլ օլաճազ տըր, էլ վէրիր
քի քէնտի գապահաթըլա պուլնա մանի օլա-
ճազ պիր հալտէ պուլընմասըն:

բ. Ֆազաթ պու սաատէթի թամմէ պու
տիւնեատա եօզ տըր: Հայաթը հազըրէմիզտէ
հիլ պիր շէյ պիզի քեամիլէն մէմնուլն իտէ-
մէյօր, մահտուտ օլան մախլուգաթըն քեաֆ-
ֆէսի պիր արայա կէլուէ, գալպիմիզտէքի
պօշուլը տօլտուրամայօր, իլմ, սէրվէթ, շէ-
րէֆ, հէր տիւրիլ մահզուգաթ: ատէթա պիր
պիրայան կիրտապա տիւշէր կիպի գալպի-
միզէ տիւշէյօրլար, վէ պուլնլարըն եիւրէքլէ-
րիմիզէ եէրլէշմէսինտէ, սաատէթէ օլան թէշ-
նէկիմիզ ատէթա թէզանեիւտ իտիյօր, տայի-
րէյի արզուլը թէվէսսիւ էլլէյօր:

Նէ՛ գարիպ մէնգարէ: Մահզուգաթը մահ-
սուլէնին ֆէվզինտէ պիր սաատէթ ֆիքրին-
տէն մահրուլ պուլընան հայլանաթ քէնտի
հալլէրինտէն մէմնուլն տըրլար. հալ պու քի
բուհընտա պիր սաատէթի թամմէնին ինթի-
յաճը միւլպրիմիլի թաշեան ինսան պէյհուտէ
եէրէ պու տիւնեատա սաատէթ արայըպ
տուրմապտա տըր: Ինսան հիլ պիր վազըթ
մէմնուլն քեամիապ տէյիլ տիր. չիւնքի ծնըն
արայըպ տա պուլտամաղը սաատէթ, պիր
սաասէթի միւլէմմէլէ վէ դայըլ մահսուսէ

(*) Տեւ թիւ 147, էջ 316:

տիր: Իմոսի մատամքի պուռ էօմիւրտէ մէսուտ օլամայօր, տարը արթթտէ մէսուտ օլամայօր վէ արատըղը սաատէթի քեոմիւրէյէ նայիլ օլամայօր տըր:

Այնի սուրէթտէ տէ պիղիմ գիհնէն օլան արգուլարըղ հագգընտա սէօլէնիլէպիլիւր: Ինսան հագիգաթա, իլմէ թէշնէ տիր, հէր շէյի թանըմազ, պիլմէք իսթէր: հալպու քի էօյրէնտիքճէ պիլտիյի արթար վէ ծնըն պիլմէյէ օլան արգուսընը հիշ պիր շէյ թէսքին իտէմէզ: էօյլէ իսէ ինսան հէր տիւրլիւ հագիգաթը, հէր տիւրլիւ իլմի ձէնապը Հագգտա պուլմազ իւզրէ խալզ օլունմըշ տըր: Հէր ճիսմին՝ մէրքէզի արզա տօղրու թէմայիւ իթտիյի կիպի, ինսանըն ճանը տախի Ալլահ, էօլիւմսիւզլիւյէ տօղրու աթըլըր տուրուր:

3. Ծեհնապը Հագգըն քեոմայսը իրսիյիսի ինսանըն ճանընըն կօյիւսիւզլիւյիսիս իսպաթ հեղիւր:

Հիշ շիւպհէ իսթէմէզքի ձէնապը Հագգ միւրատ իտէճէք օլուրսա, քէնտի հէր շէյէ գատիր գուտրէթիլէ ինսանըն ճանընը վար իթտիյի կիպի տէ հօզ իտէ պիլիւր, ֆագաթ օ պունը եարմազ, շիւնքի Ալլահ ինսանըն ճանընը իմհա իթմէք իչուն ծնը քապէն կօլիւսիւզ խալզ էյլէմիշ օլամազ: — Հէմ տէ ծնըն էվսաթը իլահիյէսի, ֆէրասէթ ու տալէթի պունա մանի օլուր: Բուհըն մէվճուտիլէթի՝ օլմայընճա օլմազ պիր սուրէթտէ տէ տէյիլ տիր: Ալլահ ծնը քէնտի հիւանի իսթիյարըլա եարաթմըշ օլուրը կիպի հօզ տա իտէ պիլիւր վէ պունա, խիլզաթը միւմթատէ հիւքմիւնտէ օլան ֆիլիլ մուհաֆազասընը թէվգիֆ իթտիրմէք քեաֆի տիր: Մամաֆիյ րուհըն պու սուրէթլէ հօզ օլապիլմէսի իչուն տա, հինէ ձէնապը Հագգըն հէր շէյէ գատիր գուտրէթիլին միւտալիւլէսինէ լիւզում վար: Եօգտան վար էթմէք վէ վարը հօզ իթմէք, հէր իքիսի տէ անճագ Ալլահտան ստտըր օլապիլիւր պիր գուվլէթին միւսալի տէրէճէտէ իքի թէճէլլիսի տիր:

Պու կիւն ֆէնն թաստիգ իտիյօր քի թապիաթտա հիշ պիր շէյ մանվ օլմայօր, զա-

յիպ օլմայօր, հէր շէյ թէհալվիւլ իտիյօր: Ծիսմ իսէ ճանա նիսպէթէն տուն պիր քէմալտթը հայիզ տիր: Շու հալտէ, ճիսմին մանվ ու զայիպ օլմագսըղըն մէվճուտիլէթին քէնտի վէրրէլէրինտէ իտամէ էյլէտիի հալտէ, ինսանըն ճիւզի միւթէպէր ու նէճիպինի թէշքիլ էյլէյէն ճանը նաճըլ օլուպ տա մանվ օլապիլիւր, զայիպ օլապիլիւր... Զանն իտէրսէմ, ինսանըն րուհը, մատտինին զէրրաթընտան իւսթիւն պիր հալէ մալիք տիր ֆիքրինի քիմսէ թէքգիպէ գալզըշամազ:

Պիր մէվճուտը խալզ էյլէմէմէք խուսըսընտա Ալլահըն սէրպէսթ օլտուղընը քիմսէ ինքեար իտէմէզ: Ֆագաթ պիր մէվճուտա պիր քէրրէ վարըզ պախշ էյլէտիքտէն սօւրա, արթըզ օ վիւճուտ հագգընտա, ծնըն մալիք օլտուղը թապիաթա կէօրէ մուամէլէ իթմէք, ձէնապը Հագգըն քապիաթընըն իգրիգասընսան տըր: Իմոսի Ալլահ ինսանըն ճանընա րուհանի պիր թապիաթ, էօլիւմսիւզ պիր մահիյէթ պախշ էյլէմիշ օլտուղընտան, պու թապիաթ վէ պու մահիյէթի մուհաֆազա էյլէմէք: Ալլահըն հիշ պիր վագըք քեհսի քեհսիսիսի գեհն իքմէզ պուլընան գուտրէթի իլահիյէսիին շանընտան տըր:

(Մապաիսի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՇԽԱՐՀ. — Սըրազան Քահանայապետը Սուրբ-Գրիգորի քաղին մէջ հրապարակական ունկնդրութիւն մը շնորհեց բազմաթիւ ուխտաւորներու, որ եկած էին գլխաւորաբար Սպանիայէն: Քահանայապետական պահակաօւնդերու նուագախումբը ողջունեց Ն. Սըրբութիւնը, որ Ռաֆայէլի սրահներուն պատշգամէն կորովի ձայնով իր հանգրտական օրհնութիւնը տուաւ և մեկնեցաւ ծովերու և կեցցեններու մէջ:

Ն. Սիկիլիոյ Ետիա հրաբուխին մօտերը վերջերս տեղի ունեցած երկրաշարժէն քնատուածներուն բաշխուելու համար՝ Ս. Քահանայապետը թեմական եպիսկոպոսին միջոցաւ անմիջապէս 40,000 ֆրանք զրկած է խոտանալով զարձեալ նպաստներ զրկել հեղզհետէ:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆ. — Զմմաւի վանքին մէջ Մայիս 11ին տեղի ունեցեց է վանական պաշտօնեաներու ընտրութիւնը, որուն մանրամասն տեղեկաւորը տուանձին կը հրատարակենք այս անգամ:

— Ամենապատիւ հոգեւոր Տէրը Զմեռեան Միաբանութեան նորընտիր Մեծաւորին, Գեր, Գրեգոր Վ. Վախաշորեանի ընտրութիւնը հաստատեց պաշտօնական կոնդակով ալ, ինչպէս արդէն հեռագիրով բրած էր Այս առթիւ Ն. Գերապատութեան շնորհեց նաեւ ծայրագոյն վարդապետութեան պատիւը: Մեր ջերմ շնորհակալութիւնները Գեր, Մ. Վ.ին:

— Ն. Գերերջանկութիւնը առանձին պաշտօնական գրութիւններով հաստատեց նաեւ վանական միւս պաշտօնատեարց ընտրութիւնը և միանգամայն Զմեռեան հեռու գտնուող նորընտիրներուն հրամայեց որ փութիւն վանքը երթալ:

* Ինչպէս գրած ենք արդէն, Մեծաշուք Պողոս էֆ. Մոմճեան Ս. Քաջանայապետին յարգալիք գերութիւն մը յղելով բողոքած էր իր ստորագրութեամբ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ հակառակ Պոլսէն Ս. Հօր ուղղուած ամբաստանագրին դէմ:

Այժմ՝ ստոյգ աղբիւրէ լուր կ'առնուիք թէ՛ այն կեղծ ամբաստանագրին ստորագրութիւնը Սուրբ Աթոռին կողմէ բաղդատուած է Մեծաշուք Պողոս էֆ. Մոմճեանի ստորագրութեան հետ, և կեղծ ըլլալը հաստատուած է, և յատկապէս յանձնարարուած է որ այս բանս Պոլիս՝ Ամեն. Կ. Պատրկարքին պաշտօնապէս ծանուցուի և հրատարակուի:

Ուստի մեծ գահաւանդութեամբ կը հրատարակենք այս լուրը, որ որչափ պատիւ կը բերէ Մեծ. Մոմճեան էֆ.ի պէս ճշմարիտ կաթողիկէի մը, նոյնչափ ամօթապարտ կ'ընէ՝ Ս. Աթոռոյ առջև մեր հասարակութեան անպատուութիւն բերող կեղծարարները, և միանգամայն ցոյց կու տայ թէ Ս. Աթոռը այսօրինակ նենգութիւններէ չի խարուիր:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Երեսփ. Ժողովը Մայիս 23ին գումարուեցաւ Խալիլ պէյի նախագահութեամբ: Նախորդ նստի ատենագրութեան վաւերացումէն ետք կարգացուեցաւ եպարքոսական քիւր մը, որ Ժողովին վաւերացման կ'ենթարկէր Խորհրդարանին արձակուրդի պահուն հրատարակուած և առժամապէս գործադրութեան դրուած 542 օրինադիւծեր: Նախագահը յայտարարեց թէ ասոնցմէ 462ը գնահատու նախարարութեանց կ'ընտցուցի յաւելուածական վարկերու վերաբերելով պիտի ղրկուին ձեռնհաս յանձնաժողովներուն: Եպարքոսական երկրորդ քիւր մը կը յիշատակէր 48 առժամեայ օրինադիւծեր, որոնց համար կառավարութիւնը ստիպողական քննութիւն կը պահանջէր: Ասոնց մէջ կային նահանգային, զինուորագրութեան, արհեստից քաղաքականութեան, նախակրթութեան ևն. օրինադիւծերը: Կարճ վիճաբանութենէ մը ետքը նախագահը ձեռամբարձ քուէի ենթարկեց զայն: Ժողովը ստուար մեծամասնութեամբ հաւանեցաւ կառավարութեան պահանջումին:

Ժողովն ապա լսելէ ետք Գահաճառին պատաս-

խանը, որ խմբագրուած էր մասնաւոր յանձնաժողովին կողմէ, նորութեամբ ընդունեցաւ զայն:

— Երեսփ. Ժողովի նախագահ Խալիլ պէյ և դեր-նախագահ Լիբ Սի փաշա մայիս 25ին քանի մը երեսփոխաններու հետ Կայս. Պալատ երթալով Սուլթանին մատուցին Երեսփ. Ժողովին ուղերձը, իբրեւ պատասխան գահաճառին:

* Երեսփոխան Մայիս 25ին նիստ գումարեց Րիֆաթ պէյի նախագահութեամբ: Ներկայ էին Եպարքոս և հանրօգուտ շինութեանց, ծովային, ելմուական և երկրագործական նախարարները: Վիճաբանութեան դրուեցան և քուէներու ոտուար մեծամասնութեամբ ընդունուեցան Սահմանագրութեան հետեւեալ չորս փոփոխեալ յօդուածները:

Յօդ. 7.— Սահմանագրութեան 35րդ յօդուածին համաձայն Սուլթանին իրաւունք ունի ի պահանջել հարկին լուծել Երեսփ. Ժողովը, պայմանաւ որ Ժողովին յետաձգման և դադարման ժամանակամիջոցին տեւողութիւնը նոյն տարւոյ գումարման համար սահմանուած պայմանաժամին կէսը չանցնի:

Յօդ. 3.— Եթէ նախարարներուն և Երեսփ. Ժողովին միջեւ անհամաձայնութիւն ծագած ատեն նախարարները պնդեն իրենց տեսակետին վրայ և Երեսփ. Ժողովը դարձեալ մերժէ մեծամասնութեամբ, Սուլթանը կրնայ գահիճը փոխել կամ Երեսփ. Ժողովը լուծել, պայմանաւ սակայն որ նոր ընտրութիւնները չորս ամսուան միջոցին մէջ կատարուին և նոր Երեսփ. Ժողովն ի նիստ հրաւիրուի: Բայց եթէ նոր Երեսփ. Ժողովը պնդէ իր նախորդին տեսակետին վրայ, ապա տուած որոշումը պարտաւորիչ պիտի ըլլայ:

Յօդ. 43.— Խորհրդարանին երկու ժողովներն ամէն տարի առանց հրաւերի սպասելու կը գումարուին Նոյմ. սկիզբը կամ եթէ յետաձգում կայ, այդ յետաձգման ժամանակամիջոցին լրանալէն ետքը: Երկու ժողովները կը բացուին կայս. Իրատեով: Խորհրդարանական նստաշրջանին տեւողութիւնը վեց ամիս է, որմէ ետք Խորհրդարանը կը փակուի: Իրատեով: Երկու ժողովներէն մին չի կրնար առանձին նիստ գումարել: Երբ Երեսփ. Ժողովը լուծուի, չորս ամիս ետք գումարուելիք ժողովին նստաշրջանը կը նկատուի արտասովոր նստաշրջան, որ կը տեւէ երկու ամիս: Այս արտասովոր նստաշրջանը կրնայ երկարաձգուել: Նոր Երեսփ. Ժողովին տեւողութեան շրջանը, որ 69րդ յօդուածին համամատ չորս տարի որոշուած է, կը սկսի այդ արտասովոր նստաշրջանին յաջորդող Նոյմ. մէկէն:

Յօդ. 73.— Այս յօդուածը ջնջուած է իբր աւելորդ և իբր սահմանագրութեան միւս յօդուածներուն հակասող:

Յետոյ հատուած առ հատուած քննուեցաւ Երեսփոխանին կողմէ տրուելիք գահաճառին պատասխանը և բանի մը թեթեւ փոփոխութիւններով ընդունուեցաւ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ. —Արսասան-
ւան՝ տար. Ծր. 10. վեցամս 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5.—
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ՝ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահադղներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով ւսժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մագրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE 1. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce, ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paicments télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Calata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.